

Կ-485⁵-24.02.2020-ՖՎ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն Հարկային օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգրք) «Ֆինանսական վարձակալություն (լիզինգ)» բառերը իրենց հոլովումներով փոխարինել «լիզինգ (տարատեսակներ)» բառերով համապատասխան հոլովումներով:

Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 20-րդ կետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի սկզբնական արժեք է համարվում այդ լիզինգի առարկայի համար սույն մասի 70-րդ կետին համապատասխան հաշվարկված սկզբնական արժեքը.».

2) 1-ին մասի 30-րդ կետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս նվազեցվում է նաեւ այդ լիզինգի առարկայի հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումները, հաշվի առած նաեւ մինչեւ լիզինգի առարկան սեփականության իրավունքով լիզինգառուին անցնելը՝ լիզինգառուի կողմից կատարված Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կապիտալ ծախսերը.».

3) 1-ին մասի 41-րդ կետում լրացնել նոր «դ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«դ. լիզինգատուի կողմից լիզինգի առարկայի հանձնումը լիզինգառուին՝ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին».

4) 1-ին մասը լրացնել 69-71-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«69) լիզինգի առարկա՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված լիզինգի առարկան.

70) լիզինգի առարկայի սկզբնական արժեք՝ լիզինգառուի մոտ լիզինգի առարկայի ստացման փաստաթղթում արտացոլված արժեք, կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող եւ Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի եւ վճարների), տեղափոխման, տեղակայման ծախսերի եւ (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ.

71) լիզինգի առարկայի հաշվեկշռային արժեք՝ լիզինգառուի մոտ լիզինգի առարկայի սկզբնական արժեքի եւ հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումների (այդ թվում՝ մաշվածության կամ ամորտիզացիայի մասհանումների) տարբերություն՝ հաշվի առած Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կապիտալ ծախսերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում յուրաքանչյուր ամսվա վերջին օրը՝ տվյալ ամսվա ընթացքում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափով, եթե սույն ենթակետի երկրորդ պարբերությամբ այլ բան սահմանված չէ: Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով լիզինգի առարկան հանձնվել է սեփականության իրավունքով լիզինգառուին մինչեւ ամսվա վերջին օրը, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում լիզինգի առարկայի՝ սեփականության իրավունքով լիզինգառուին հանձնման պահը՝ լիզինգի առարկայի սեփականության իրավունքով լիզինգառուին հանձնման ամսվա ընթացքում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափով, եթե սույն ենթակետի երկրորդ պարբերությամբ այլ բան սահմանված չէ:

Լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված՝ մինչեւ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահը լիզինգի առարկայի արժեքի մաս կազմող նախնական վճար ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահին՝ մինչեւ այդ պահը ստացված լիզինգի առարկայի արժեքի մաս կազմող նախնական վճարի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «եթե պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին» բառերը փոխարինել «եթե պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի

առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին կամ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարների մասով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 55-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը լրացնել նոր 4.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«4.1) լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ»,

2) 3-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«5) 4.1-ին կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է լիզինգի առարկայի հանձնում-ընդունումը փաստաթղթավորելու համար:»,

3) 5-րդ մասից հետո լրացնել նոր 5.1-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«5.1. լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտում պարտադիր ներառվում են՝

1) հաշվարկային փաստաթղթի սերիան ու համարը.

2) հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթիվը.

4) ավելացված արժեքի հարկի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունով կամ տողով (ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում).

5) լիզինգի առարկայի անվանացանկը, քանակը, միավորի գինը ու ընդհանուր արժեքը.

6) լիզինգատուի.

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաեւ ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու եւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի առաքման կամ հանձնման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը,

7) լիզինգառուի.

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաեւ ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու եւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան եւ (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաեւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ լիզինգի առարկան հանձնվում է առաքման կամ հանձնման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա. ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը, ինչպես նաեւ գույքի լիզինգով (տարատեսակներով) տրամադրումը՝ տոկոսի գումարների մասով,»:

Հոդված 7. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 19-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«16) եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափը եւ հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարները, իսկ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում լիզինգի (տարատեսակների) պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարները:»:

Հոդված 8. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-ին մասի.

ա) 47-րդ կետի «բ» ենթակետում «փոխառությունների» բառից հետո լրացնել «կամ գույքի լիզինգով (տարատեսակներով)» բառերով,

բ) 47-րդ կետի «ժե» ենթակետում «ավարտին» բառը փոխարինել «ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը» բառերով.

գ) 47-րդ կետի «ի» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «իա» ենթակետով՝

«իա. լիզինգի (տարատեսակների) պայմանագրով՝ բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից այն գույքի լիզինգով (տարատեսակներով) տրամադրումը, որի ձեռքբերման ժամանակ գույքի մատակարարման գործարքից ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել եւ չի վճարվել:»:

Հոդված 9. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9-րդ եւ 10-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«9) լիզինգատուի մոտ լիզինգի առարկայի օտարման գործարքից առաջացած՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի եւ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով վերաձեւակերպված ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերության չափով, եթե այդ լիզինգի առարկան մինչեւ օտարումը տրամադրված է եղել լիզինգի (տարատեսակների) պայմանագրով, որով նախատեսված չի եղել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին.

10) եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրերով ստացվել են թեթեւ մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթեւ մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:»:

Հոդված 10. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «տոկոսների» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսի գումարների)»:

Հոդված 11. Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրված» բառերը փոխարինել «լիզինգով (տարատեսակներով) տրված (եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին)» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 121-րդ հոդվածի

1) 1-ին մասում «ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված» բառերը փոխարինել «լիզինգով (տարատեսակներով) ստացված (եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին)» բառերով;

2) 1-ին մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ այդ սեփականության իրավունքով անցած ակտիվի՝ ամորտիզացիոն ժամկետի հաշվարկելու նպատակով, ամորտիզացիոն ժամկետի սկիզբ է համարվում այդ հարկ վճարողի մոտ այդ լիզինգի առարկայի ամորտիզացիայի հաշվարկման առաջին օրը.»

3) 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«9. Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա լիզինգատուի մոտ լիզինգի առարկայի գծով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ծախս է ճանաչվում լիզինգի պայմանագրով նախատեսված լիզինգի առարկայի գծով այդ հաշվետու ժամանակաշրջանում որպես եկամուտ ճանաչված գումարի ու լիզինգի առարկայի ընդհանուր արժեքի հարաբերության եւ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահին լիզինգի առարկայի հաշվեկշռային արժեքի արտադրյալը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 225-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«5. Եթե հարկման օբյեկտը հանդիսանում է լիզինգի առարկա, ապա անշարժ գույքի հարկ վճարող է համարվում լիզինգառուն:»:

Հոդված 14. Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ եւ 6-րդ կետերով.

«5) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է լիզինգի առարկայի նկատմամբ լիզինգի իրավունքի պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի հաշվարկումը դադարում է լիզինգի (տարատեսակների) առարկայի նկատմամբ լիզինգի իրավունքի դադարման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

6) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը սույն մասի 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածում կատարում է լիզինգառուն, իսկ լիզինգատուի մոտ այդ նույն ժամանակահատվածում լիզինգի (տարատեսակների) պայմանագրով լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը չի հաշվարկվում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝

«5) անշարժ գույքի կադաստր վարող մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:»:

Հոդված 16. Օրենսգրքի 240-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4. Եթե հարկման օբյեկտը հանդիսանում է լիզինգի առարկա, ապա փոխադրամիջոցների գույքահարկ վճարող է համարվում լիզինգառուն:»:

Հոդված 17. Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ եւ 6-րդ կետերով.

«5) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցի նկատմամբ լիզինգի իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է լիզինգի (տարատեսակաների) առարկա հանդիսացող փոխադրամիջոցի նկատմամբ լիզինգի իրավունքի դադարման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

6) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունը սույն մասի 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածում կատարում է լիզինգառուն, իսկ լիզինգառուի մոտ այդ նույն ժամանակահատվածում լիզինգի (տարատեսակաների) պայմանագրով լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չի հաշվարկվում:»:

Հոդված 18. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով՝

«4) շարժական գույքի կադաստր վարող մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում փոխադրամիջոցների լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցների հաշվառման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:»:

Հոդված 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 13-18-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հոդված 20. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական գրանցում ստացած՝ անշարժ գույք հանդիսացող լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է 2021 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 21. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական գրանցում ստացած՝ փոխադրամիջոց հանդիսացող լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է 2021 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 22. Անշարժ գույքի կադաստր վարող մարմինը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:

Հոդված 23. Շարժական գույքի կադաստր վարող մարմինը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցների լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցների հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:

Հոդված 24. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ, կարող է դուրս գրվել նաև ոչ էլեկտրոնային եղանակով:

Կ-485⁵-24.02.2020-ՖՎ-011/1

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն Հարկային օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) «ֆինանսական վարձակալություն (լիզինգ)» բառերը իրենց հոլովումներով փոխարինել «լիզինգ (տարատեսակներ)» բառերով համապատասխան հոլովումներով:

Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 20-րդ կետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի սկզբնական արժեք է համարվում այդ լիզինգի առարկայի համար սույն մասի 70-րդ կետին համապատասխան հաշվարկված սկզբնական արժեքը.».

2) 1-ին մասի 30-րդ կետում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս նվազեցվում է նաեւ այդ լիզինգի առարկայի հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումները, հաշվի առած նաեւ մինչեւ լիզինգի առարկան սեփականության իրավունքով լիզինգառուին անցնելը՝ լիզինգառուի կողմից կատարված Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կապիտալ ծախսերը.».

3) 1-ին մասի 41-րդ կետում լրացնել նոր «դ» ենթակետով հետեւյալ բովանդակությամբ.

«դ. լիզինգառուի կողմից լիզինգի առարկայի հանձնումը լիզինգառուին՝ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին».

4) 1-ին մասը լրացնել 69-71-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«69) լիզինգի առարկա՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված լիզինգի առարկան.

70) լիզինգի առարկայի սկզբնական արժեք՝ լիզինգառուի մոտ լիզինգի առարկայի ստացման փաստաթղթում արտացոլված արժեք, կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող եւ Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի եւ վճարների), տեղափոխման, տեղակայման ծախսերի եւ (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ.

71) լիզինգի առարկայի հաշվեկշռային արժեք՝ լիզինգառուի մոտ լիզինգի առարկայի սկզբնական արժեքի եւ հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումների (այդ թվում՝ մաշվածության կամ ամորտիզացիայի մասհանումների) տարբերություն՝ հաշվի առած Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կապիտալ ծախսերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում յուրաքանչյուր ամսվա վերջին օրը՝ տվյալ ամսվա ընթացքում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափով, եթե սույն ենթակետի երկրորդ պարբերությամբ այլ բան սահմանված չէ: Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով լիզինգի առարկան հանձնվել է սեփականության իրավունքով լիզինգառուին մինչեւ ամսվա վերջին օրը, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում լիզինգի առարկայի՝ սեփականության իրավունքով լիզինգառուին հանձնման պահը՝ լիզինգի առարկայի սեփականության իրավունքով լիզինգառուին հանձնման ամսվա ընթացքում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափով, եթե սույն ենթակետի երկրորդ պարբերությամբ այլ բան սահմանված չէ:

Լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված՝ մինչեւ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահը լիզինգի առարկայի արժեքի մաս կազմող նախնական վճար ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահին՝ մինչեւ այդ պահը ստացված լիզինգի առարկայի արժեքի մաս կազմող նախնական վճարի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «եթե պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին» բառերը փոխարինել «եթե պայմանագրով չի

նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին կամ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարների մասով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 55-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը լրացնել նոր ~~8-րդ~~4.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«~~8.4.1~~ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ»,

2) 3-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«5) ~~8-րդ~~4.1-ին կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է լիզինգի առարկայի հանձնում-ընդունումը փաստաթղթավորելու համար:»,

3) 5-րդ մասից հետո լրացնել նոր 5.1-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«5.1. լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտում պարտադիր ներառվում են՝

1) հաշվարկային փաստաթղթի սերիան ու համարը.

2) հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթիվը.

4) ավելացված արժեքի հարկի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունով կամ տողով (ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում).

5) լիզինգի առարկայի անվանացանկը, քանակը, միավորի գինը ու ընդհանուր արժեքը.

6) լիզինգատուի.

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաեւ ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու եւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի առաքման կամ հանձնման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը,

7) լիզինգառուի.

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաեւ ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու եւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան եւ (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու

դեպքում՝ նաեւ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ լիզինգի առարկան հանձնվում է առաքման կամ հանձնման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը եւ ստորագրությունը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա. ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը, ինչպես նաեւ գույքի լիզինգով (տարատեսակներով) տրամադրումը՝ տոկոսների գումարների մասով,»:

Հոդված 7. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 19-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«16) եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա լիզինգի առարկայի արժեքի համապատասխան չափը եւ հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարները, իսկ եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում լիզինգի (տարատեսակների) պայմանագրով ստացման ենթակա տոկոսի գումարները:»:

Հոդված 8. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-ին մասի.

ա) 47-րդ կետի «բ» ենթակետում «փոխառությունների» բառից հետո լրացնել «կամ գույքի լիզինգով (տարատեսակներով)» բառերով,

բ) 47-րդ կետի «ժե» ենթակետում «ավարտին» բառը փոխարինել «ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը» բառերով.

գ) 47-րդ կետի «էի» ենթակետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «ժզիա» ենթակետով՝

«ժզիա. լիզինգի (տարատեսակների) պայմանագրով՝ բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից այն գույքի լիզինգով (տարատեսակներով) տրամադրումը, որի ձեռքբերման ժամանակ գույքի մատակարարման գործարքից ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել եւ չի վճարվել:»:

Հոդված 9. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9-րդ եւ 10-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«9) լիզինգատուի մոտ լիզինգի առարկայի օտարման գործարքից առաջացած՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի եւ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով վերաձեւակերպված ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերության չափով, եթե այդ լիզինգի առարկան մինչեւ օտարումը տրամադրված է եղել լիզինգի (տարատեսակների) պայմանագրով, որով նախատեսված չի եղել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչեւ դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին.

10) եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրերով ստացվել են թեթեւ մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթեւ մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:»:

Հոդված 10. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «տոկոսների» բառից հետո լրացնել «այդ թվում՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսների գումարների»:

Հոդված 11. Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրված» բառերը փոխարինել «լիզինգով (տարատեսակներով) տրված (եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին)» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 121-րդ հոդվածի

1) 1-ին մասում «ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված» բառերը փոխարինել «լիզինգով (տարատեսակներով) ստացված (եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին)» բառերով;

2) 1-ին մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ այդ սեփականության իրավունքով անցած ակտիվի՝ ամորտիզացիոն ժամկետի հաշվարկելու նպատակով, ամորտիզացիոն ժամկետի սկիզբ է համարվում [այդ հարկ վճարողի մոտ](#) այդ լիզինգի առարկայի ամորտիզացիայի հաշվարկման առաջին օրը.»

3) 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«9. Եթե լիզինգի (տարատեսակների) պայմանագրով նախատեսված է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին, ապա լիզինգատուի մոտ լիզինգի առարկայի գծով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ծախս է ճանաչվում լիզինգի պայմանագրով նախատեսված լիզինգի առարկայի գծով այդ հաշվետու ժամանակաշրջանում որպես եկամուտ ճանաչված գումարի ու լիզինգի առարկայի ընդհանուր արժեքի հարաբերության եւ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման պահին լիզինգի առարկայի հաշվեկշռային արժեքի արտադրյալը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 225-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«5. Եթե հարկման օբյեկտը հանդիսանում է լիզինգի առարկա, ապա անշարժ գույքի հարկ վճարող է համարվում լիզինգառուն:»:

Հոդված 14. Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ եւ 6-րդ կետերով.

«5) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է լիզինգի առարկայի նկատմամբ լիզինգի իրավունքի պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի հաշվարկումը դադարում է լիզինգի (տարատեսակների) առարկայի նկատմամբ լիզինգի իրավունքի դադարման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

6) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը սույն մասի 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածում

կատարում է լիզինգառուն, իսկ լիզինգատուի մոտ այդ նույն ժամանակահատվածում լիզինգի (տարատեսականների) պայմանագրով լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը չի հաշվարկվում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝

«5) անշարժ գույքի կադաստր վարող մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:»:

Հոդված 16. Օրենսգրքի 240-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4. Եթե հարկման օբյեկտը հանդիսանում է լիզինգի առարկա, ապա փոխադրամիջոցների գույքահարկ վճարող է համարվում լիզինգառուն:»:

Հոդված 17. Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 5-րդ եւ 6-րդ կետերով.

«5) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցի նկատմամբ լիզինգի իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է լիզինգի (տարատեսականների) առարկա հանդիսացող փոխադրամիջոցի նկատմամբ լիզինգի իրավունքի դադարման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

6) լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունը սույն մասի 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածում կատարում է լիզինգառուն, իսկ լիզինգատուի մոտ այդ նույն ժամանակահատվածում լիզինգի (տարատեսականների) պայմանագրով լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չի հաշվարկվում:»:

Հոդված 18. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով՝

«4) շարժական գույքի կադաստր վարող մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում փոխադրամիջոցների լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցների հաշվառման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին:»:

Հոդված 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 13-18-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հոդված 20. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական գրանցում ստացած՝ անշարժ գույք հանդիսացող լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է 2021 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 21. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական գրանցում ստացած՝ փոխադրամիջոց հանդիսացող լիզինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիզինգառուի մոտ

փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է 2021 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 22. Անշարժ գույքի կադաստր վարող մարմինը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է ~~հարկ վճարողներին~~ հաշվառող մարմիններին:

Հոդված 23. Շարժական գույքի կադաստր վարող մարմինը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ լիզինգի առարկա հանդիսացող փոխադրամիջոցների լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող ~~անշարժ գույքի փոխադրամիջոցների~~ հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է ~~հարկ վճարողներին~~ հաշվառող մարմիններին:

Հոդված 24. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ, կարող է դուրս գրվել նաև ոչ էլեկտրոնային եղանակով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱ-
 ՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ և ԲԱՆԿԱՅԻՆ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ», «ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ
 ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
 «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-485-24.02.2020-ՖՎ-011/1)
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

N°	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ	1. 4-րդ հոդվածով փոփոխվող՝ 1) 677-րդ հոդվածի 3-րդ մասում «վաճառողին» բառից հետո լրացնել «գրավոր» բառը; 2) 677-րդ հոդվածի 6-րդ մասում «լիզինգային գործունեություն» բառերը փոփոխել «լիզինգի գործառնություններ»	Ընդունվել են, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

			<p>բառերով, ինչպես նաև հանել «նման գործունեություն իրականացնելու» բառերը;</p> <p>3) 678-րդ հոդվածի անվանումից հանել «Լիզինգի պայմանագրով» բառերը, 4-րդ մասը «լիզինգառուին» բառից հետո լրացնել «,իսկ ենթալիզինգի դեպքում ենթալիզինգառուին» բառերով, ինչպես նաև «լիզինգառուի» բառից հետո լրացնել «կամ ենթալիզինգառուի» բառերը;</p> <p>4) 681-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում «հանդիսանում» բառից հետո համապատասխանաբար լրացնել «բանկը կամ», «բանկ կամ» բառերը, ինչպես նաև հանել 1-ին մասի վերջին նախադասությունը;</p> <p>5) 684-րդ հոդվածի 2-րդ մասում «ունի» բառից հետո լրացնել «պայմանագրով սահմանված կարգով» բառերը, ինչպես նաև «ենթավարձակալության» բառը փոփոխել «վարձակալության» բառով:</p> <p>6) 684.5 հոդվածի 1-ին մասի 2)-րդ և 3)-րդ կետերը փոփոխել և խմբագրել հետևյալ բովանդակությամբ`</p> <p>«2) լիզինգառուն խոչընդոտում է լիզինգատուին իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի</p>		
--	--	--	---	--	--

			<p>նկատմամբ, 3) լիզինգառուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում պարբերաբար կամ ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել պայմանագրով սահմանված լիզինգային վճարի հերթական գումարը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:</p> <p>2. 5-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>		
2.	ՀՀ կառավարություն	<p>«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված</p>	<p>2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
3.	ՀՀ կառավարություն	<p>«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 3-րդ</p>	<p>3-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

		հողված			
4.	ՀՀ կառավարություն	Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
5.	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
6.	ՀՀ կառավարություն	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	1) 5-րդ հոդվածում «8» թիվը փոփոխել «4.1.» թվով: 2) 6-րդ և 10-րդ հոդվածներում «տոկոսների» բառը փոփոխել «տոկոսի գումարների» բառերով:	Ընդունվել են, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

		<p>մասին ՀՀ օրենքի նախագծի՝</p>	<p>3) 8-րդ հոդվածի գ) կետում «ժե» տառերը փոփոխել «ի» տառով, ինչպես նաև «ժգ» տառերը փոփոխել «իա» տառերով:</p> <p>4) 12-րդ հոդվածի 2)-րդ կետում «համարվում» բառից հետո լրացնել «այդ հարկ վճարողի մոտ» բառերով:</p> <p>5) 22-րդ հոդվածից հանել «հարկ վճարողներին» բառերը:</p> <p>6) 23-րդ հոդվածում «անշարժ գույքի» բառերը փոփոխել «փոխադրամիջոցների» բառով, ինչպես նաև հանել «հարկ վճարողներին» բառերը:</p> <p>Նախագիծը լրացնել հետևալ բովանդակությամբ նոր 24-րդ հոդվածով՝</p> <p>«Հոդված 24. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1-ին կետով սահմանված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ, կարող է դուրս գրվել նաև ոչ էլեկտրոնային եղանակով:»:</p>		
--	--	--	--	--	--